

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԻ 12 ԵՎ 14 ՀՈԴՎԱԾՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

30 հունիսի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.  
Գ. Հարուլյանյանի (նախագահող), Կ. Բալայանի, Տ. Դանիելյանի, Ֆ. Թոփյանի  
(գելուցող), Վ. Շովիաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Ռ. Նազարյանի, Ռ. Պապյանի,  
Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող կողմի ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի պարզամավոր, ՀՀ  
Ազգային ժողովի փարածքային կառավարման և քեղական ինքնակառավարման  
հարցերի մշղական հանձնաժողովի նախագահ Ռ. Մարգարյանի,

գործով որպես պարասիանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշ-  
տոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխարհակազմի օրենսդրության  
վերլուծության վարչության պետ Ա. Խաչարյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի և 101 հոդվածի  
3-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության  
օրենքի 25 և 68 հոդվածների,

դրսաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Ազգային ժողովի կանո-  
նակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 12 և 14 հոդվածների՝ ՀՀ  
Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի  
թվով 35 պարզամավորների՝ 11.03.2009թ. սահմանադրական դատարան  
մուլքագրված դիմումն է:

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պարասիանող կողմերի ներկայացուցիչների բացաբրությունները, հետազոտելով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, այդ թվում՝ դիմողի կողմից ներկայացված միջնորդագիրը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դադարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

**1.** «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2002 թվականի փետրվարի 20-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2002 թվականի մարտի 21-ին եւ ուժի մեջ է մտել 2002 թվականի ապրիլի 12-ին:

**2.** Օրենքի 12 հոդվածը սահմանում է պարզամավորի լիազորությունների դադարման հիմքերը: Համաձայն նշված հոդվածի 1-ին մասի՝ «Պարզամավորի լիազորությունները դադարում են, եթե՝

- ա) ավարտվել է Ազգային ժողովի լիազորությունների ժամկետը.
- բ) արձակվել է Ազգային ժողովը.
- գ) նա խախտել է Սահմանադրության 65-րդ հոդվածի առաջին մասի պահանջը.
- դ) նա կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.
- ե) մեկ հերթական նախարարականի ընթացքում քվեարկությունների ավելի քան կեսից նրա բացակայելը, սույն օրենքի 99-րդ հոդվածով սահմանված կարգով, համարվել է անհարգելի.
- զ) նա դադարապրվել է ազարագրվելու առաջնային պահանջմանը.
- է) օրինական ուժի մեջ է մտել նրան անգործունակ ճանաչելու մասին դադարանի որոշումը.

ը) ուժի մեջ է մտել նրա ընդունության գրանցումը չեղյալ հայդարարելու մասին սահմանադրական դադարանի որոշումը.

թ) նա փվել է հրաժարական՝ սույն օրենքի 13-րդ հոդվածով սահմանված կարգով.

ժ) նա մահացել է»:

Օրենքի 14 հոդվածը սահմանում է խմբակցությունների սփեղծման, խմբակցությունից պարզամավորի դուրս գալու, խմբակցության գործունեության դադարման եւ վերականգնման կարգը: Հոդվածի 3-րդ մասով, մասնավորապես, սահմանվում է. «Պարզամավորը կարող է դուրս գալ խմբակցությունից՝ այդ մասին գրավոր գեղյակ պահելով համապարասիան խմբակցության ղեկավարին»:

**3. Ըստ դիմող կողմի՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի վիճարկվող 12 հոդվածը չի պարունակում որեւէ նորմ, ըստ որի համամասնական ընդրակարգով ընդրված պարզամավորի լիազորությունների դադարման հիմք կարող է հանդիսանալ նաև պարզամավորի դուրս գալը եւ/կամ հեռացումը համապարապահան կուսակցությունից ու խմբակցությունից: Մինչդեռ համամասնական ընդրակարգն ունի իր առանձնահավաքությունները, որոնք հիմնականում դրսեւորվում են նրանում, որ այս ընդրակարգի դեպքում ժողովուրդը կոնկրետ քվեարկում է քաղաքական միավորի՝ կուսակցության կամ դաշինքի օգբին՝ հավանություն տալով վերջիններիս նախընդրական ծրագրին եւ գաղափարական ուղեգծին՝ արդյունքում հնարավորություն սրբանալով իրականացնելու իր իշխանությունը դրվագ քաղաքական միավորի կողմից ձեւավորված խմբակցության միջոցով: Համամասնական ընդրակարգով ընդրությունների արդյունքում ժողովուրդը, ՀՀ Սահմանադրության 2 հոդվածին համապարապահան, իր իշխանությունը պարվիրակում է ոչ թե այս կամ այն թեկնածուին, այլ կոնկրետ քաղաքական ուժին, միավորին, կուսակցությանը՝ որոշակի ծրագրեր իրականացնելու նպարակով: Նեփեւաբար, համամասնական ընդրակարգով ընդրված պարզամավորի՝ դրվագ խմբակցությունից դուրս գալու հանգամանքը վերջինիս զրկում է ժողովուրդի կողմից պարվիրված ծրագրերն ամբողջական ծավալով իրականացնելու հնարավորությունից: Ըստ այդմ՝ համամասնական ընդրակարգով ընդրված պարզամավորի՝ խմբակցությունից դուրս գալը, որի հնարավորությունն ամրագրված է օրենքի 14 հոդվածում, պետք է հիմք հանդիսանալ րա լիազորությունների դադարման համար:**

Դիմող կողմը վկայակոչում է, որ մինչեւ 1997թ. մայիս ամիսը «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքը՝ որպես համամասնական ընդրակարգով ընդրված պարզամավորի լիազորությունների դադարման հիմք, ի թիվս այլոց, նախադեսում էր դրվագ խմբակցությունից պարզամավորի դուրս գալու հանգամանքը: Ներկայումս, ըստ դիմոդի, երբ ընդրված է համամասնական ընդրակարգով ընդրվող պարզամավորների թվաքանակն ավելացնելու քաղաքական ուղեգծի, առաջանում է նման հիմքի վերականգնման օբյեկտիվ անհրաժեշտություն, որպեսզի հնարավոր լինի դրվագ խմբակցության գոյության ապահովումը: Նման հիմքի առկայությունը պահանջվում է նաև քաղաքական համակարգի կայացումն ապահովելու, դրաբանույթ ներազդեցությունների արդյունքում խորհրդարանական քաղաքական

ուժերի հարաբերակցության կամայական փոփոխությունը կանխարգելու անհրաժեշտությունից ելնելով:

Դիմողի պնդմամբ՝ ՀՀ Սահմանադրության 67 հոդվածի դրույթն առ այն, որ պարզամավորի լիազորությունները դադարում են նրա հրաժարականի դեպքում, նույնպես ենթադրում է, որ համամասնական ընդունակությունը ընդունակությունը պարզամավորն իր խմբակցությունից դուրս գալու դիմումի հետ մեկտեղ պետք է ներկայացնի հրաժարականի դիմումը:

Դիմողի կարծիքով, չնայած նրան, որ ՀՀ Սահմանադրության 66 հոդվածը մերժում է հրամայական մանդապի ինսպիրուտուրը, այդուամենայնիվ, այն դեպքում, եթե խախտվում է ՀՀ Սահմանադրության անփոփոխելի 2 հոդվածում ամրագրված՝ ժողովրդի կողմից իր ընդունակությունը միջոցով իշխանության իրականացման համաժողովրդական սկզբունքը, օրենկությունը անհրաժեշտություն է առաջանալ օրենսդրությամբ՝ որպես պարզամավորի լիազորությունների դադարման հիմք ամրագրել խմբակցությունից դրվագ պարզամավորի դուրս գալու հանգամանքը:

Ըստ դիմողի կողմից՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 12 և 14 հոդվածները հակասում են ՀՀ Սահմանադրության 2-րդ, 7-րդ, 30-րդ և 67-րդ հոդվածների պահանջներին:

**4. Պարասխանողը** նշում է, որ ՀՀ Սահմանադրության 67 հոդվածի 1-ին մասում սահմանվել են այն դեպքերը, որոնց պարագայում դադարում են Ազգային ժողովի պարզամավորի լիազորությունները: Միաժամանակ, ի թիվս Սահմանադրության հիշյալ հոդվածով ամրագրված դեպքերի, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 12 հոդվածով սահմանվել են Ազգային ժողովի պարզամավորի լիազորությունների դադարման լրացուցիչ հետեւյալ դեպքերը՝ եթե ուժի մեջ է մտել պարզամավորի ընդունակության գրանցումը չեղյալ հայդարարելու մասին սահմանադրական դադարանի որոշումը կամ եթե պարզամավորը մահացել է: Իսկ նույն օրենքի 14 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պարզամավորը կարող է դուրս գալ խմբակցությունից՝ այդ թվում գրավոր գեղյակ պահելով համապարասան խմբակցության դեկավարին:

Պարասխանողի պնդմամբ՝ ՀՀ Սահմանադրության և «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի հիշաբակված հոդվածներում ամրագրված նորմերի բովանդակությունից բխում է, որ պարզամավորական խմբակցությունից պարզամավորի դուրս գալը կամ կուսակցությունից ու պարզամավորական

խմբակցությունից պարզամավորին հեռացնելը չեն կարող դիմարկվել որպես հիմք պարզամավորի լիազորությունների դադարման համար:

Պարասխանող կողմը վկայակոչում է նաեւ այն հանգամանքը, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 12 և 14 հոդվածների սահմանադրականության խնդիրը դիմող կողմը պայմանավորում է օրենքի բացի առկայության հանգամանքով։ Փաստուն, դիմողն իրականում վիճարկում է ոչ թե «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 12 և 14 հոդվածների սահմանադրականության հարցը, այլ մաքնանշում է վիճարկող հոդվածների լրացման անհրաժեշտությունը։ Ընդ որում, սահմանադրականության նշված հարցի ներկայացումը նպարակ է հետապնդում «սրեղծել կոնկրետ իրավական հիմքեր, կուսակցության նախընդրական ծրագրերին եւ քաղաքական գծին հակառակ դիրքորոշում դրսետրող համամասնական ընդրակարգով ընդրված ԱԺ պարզամավորներին կուսակցությունից եւ խմբակցությունից հեռացնելու համար»։

Վերոգրյալի հիման վրա պարասխանող գրնում է, որ վիճարկող դրույթները չեն հակասում ՀՀ Սահմանադրությանը եւ առաջարկում է «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 12 և 14 հոդվածները ճանաչել ՀՀ Սահմանադրությանը համապարախանող։

**5.** Վերլուծելով հիմնահարցի վերաբերյալ միջազգային սահմանադրական պրակտիկան եւ Եվրոպական սահմանադրական զարգացումների հիմնական միփումները՝ ՀՀ սահմանադրական դադարանուն արձանագրում է, որ հրամայական մանդապն անհարիր է ժողովրդավարական իրավական համակարգերին։ Այն խորթ լինելով Եվրոպական ժողովրդավարություններին՝ արգելվում է մի շարք երկրների սահմանադրական նորմերով (Անդրրա, հոդվ. 53, Բուլղարիա, հոդվ. 67, Գերմանիա, հոդվ. 38, Իսպանիա, հոդվ. 67, Իտալիա, հոդվ. 67, Լիբիա, հոդվ. 59, Խորվաթիա, հոդվ. 74, Շայաստան, հոդվ. 66, Մոլդովա, հոդվ. 68, Չեխիա, հոդվ. 26, Ռումինիա, հոդվ. 66 եւ այլն)։

Ներկայացուցական ազար մանդապի անհրաժեշտության գաղափարն ազարական ժողովրդավարական իրավական համակարգերում արմագրավորվեց ասդի-ճանաբար եւ դարձավ կարեւոր երաշխիք երկրում սահմանադրական ժողովրդավարություն հաստափելու համար, որպես իշխանության լեզվիմության աղբյուրը ժողովուրդն է։ **Ներկայացուցական ազար մանդապի Էռլեյունն այն է, որ պարզամավորները ներկայացնում են ոչ թե ու ոչ միայն իրենց ընդունակություններին, այլ**

**ընդհանրական սուբյեկտ՝ ժողովրդին, ում կամքը գերակա է տեղական ընդրագանգվածի կամքի նկարմամբ:**

Միաժամանակ, միջազգային պրակտիկայում առկա է մեկ այլ ինսպիրուտ, որը՝ առնչվելով իրամայական մանդապի ինսպիրուտին, այնուամենայնիվ, փարբեր իրավական բովանդակություն ունի: **Դա մանդապի գործողության դադարեցումն է կուսակցական պարկանելության փոփոխության հետևանքով:** Այս ինսպիրուտը վերաբերում է համամասնական ընդրական համակարգի առանձնահավկությունների հետ: Այն երկրներում, որպես գործում է մեծամասնական-համամասնական խառն ընդրական համակարգ ու որոնցում առկա է կայուն եւ զարգացած քաղաքական կառուցակարգ, ազար մանդապի սկզբունքը փարածվում է բոլոր պարզամավորների վրա եւ կուսակցական պարկանելության փոփոխությունը նման խնդիր չի հարուցում: Խնդիրն առկա է այն պարագայում, երբ պարզամավորության թեկնածուն ընդրական քվեաթերթիկում ներկայացված չէ, եւ ընդրողը նրա վերաբերյալ որեւէ դիրքորոշում չի արդահայտել:

**6.** Միջազգային սահմանադրափրավական պրակտիկան վկայում է, որ ընդրական օրենսդրությամբ նախարեսված համամասնական ընդրակարգը կարող է լինել նաև այնպիսին, որ ընդրողը ձայնը փալիս է որեւէ քաղաքական ուժի՝ նրա քաղաքական կողմնորոշումների ու հանրությանը ներկայացրած ծրագրային մոդելումների հիման վրա՝ առանձին դիրքորոշում չարփահայփելով կուսակցության համամասնական ընդրական ցուցակներում ներկայացված անձանց վերաբերյալ: **Նման պարագայում քաղաքական ուժն է ժողովրդի կողմից պարվիրակված քաղաքական իշխանության կրողը՝ առանձին կամ քաղաքական կոալիցիա կազմելու ճանապարհով:** **Նման ընդրակարգում ժողովրդի վսփահությունը ոչ թե անձի, այլ քաղաքական ուժի ու նրա կողմից ներկայացված ծրագրային մոդելումների նկարմամբ է:** Այդ վսփահությամբ է պայմանավորված նաև ընդրությունների ու դրա արդյունքում ձեւավորվող իշխանության լեզվիմությունը: **Քաղաքական մշակույթն այն մակարդակին պետք է լինի, որ ընդրողը կարողանա կողմնորոշվել հենց նման ծրագրային մոդելումներով:** **Նման ընդրակարգի պայմաններում համամասնական կարգով թեկնածու են գրանցվում կուսակցությունները կամ նրանց դաշինքները, որոնք նախընդրական քարոզությունը վարում են այնպիսի ծրագրային մոդելումների հիման վրա, որոնք ընդրողին պետք է**

կողմնորոշեն օրենսդիր պետականական գործառույթը փվյալ կուսակցությանը վսփահելու կամ չվսփահելու հարցում: Դրանով է նաև որոշվում քաղաքական ուժի իրական դեղն ու դերն օրենսդիր իշխանության համակարգում:

Այսպիսի ընդրակարգ է գործում նաև Հայաստանի Հանրապետությունում: Համաձայն ՀՀ ընդրական օրենսգրքի (հոդվ. 7)՝ Ազգային ժողովի համամասնական ընդրակարգով ընդրությունները համարվում են համապետական ընդրություններ: Ընդ որում, 90 պարզամավոր ընդրվում է համամասնական ընդրակարգով, հանրապետության ամբողջ տարածքն ընդգրկող մեկ բազմամանդապ ընդրապարագից՝ կուսակցությունների ընդրական ցուցակներով առաջադրված պարզամավորության թեկնածուների թվից (հոդվ. 95, մաս 2): Ազգային ժողովի՝ համամասնական ընդրակարգով պարզամավորության թեկնածուներ առաջադրելու իրավունք ունեն կուսակցությունները եւ կուսակցությունների դաշինքները (հոդվ. 99, մաս 1): Կուսակցություններն Ազգային ժողովի՝ համամասնական ընդրակարգով ընդրություններին մասնակցելու հայրը ներկայացնում են կենդրոնական ընդրական հանձնաժողով՝ իրենց մշտապես գործող մարմնի որոշմամբ: Կուսակցությունների դաշինքներն Ազգային ժողովի՝ համամասնական ընդրակարգով ընդրություններին մասնակցելու հայրը ներկայացնում են Կենդրոնական ընդրական հանձնաժողով՝ դաշինքի անդամ կուսակցությունների մշտապես գործող մարմինների վավերացրած որոշմամբ (հոդվ. 100, մաս 1):

Օրենսգիրքը նաև ուղղակի դրույթ է պարունակում, **որ համամասնական ընդրակարգով Ազգային ժողովում մանդապներ սպանում են կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները)** (հոդվ. 100, կետ 8): Միաժամանակ, օրենսգրքի 115 հոդվածը նախադեսում է, որ Ազգային ժողովի՝ համամասնական ընդրակարգի համար նախադեսված մանդապները բաշխվում են այն կուսակցությունների եւ կուսակցությունների դաշինքների ընդրական ցուցակների միջև, որոնք սպացել են վավեր քվեաթերթիկների ընդհանուր թվի եւ անցփությունների թվի գումարի համապատասխանաբար առնվազն՝ կուսակցության դեպքում՝ 5, իսկ կուսակցությունների դաշինքի դեպքում՝ 7 դրույթ կողմ քվեարկված քվեաթերթիկներ:

Ընդրական օրենսգիրքը նախադեսում է նաև (հոդվածներ 99, 100), որ կուսակցություններն են կազմում ու ներկայացնում իրենց պարզամավորության թեկնածուների ցուցակները՝ **որոշելով այդ ցուցակում յուրաքանչյուրի դեղը:** Ընդրույթ այս հարցում որեւէ մասնակցություն չունի: Ազգային ժողովի համամասնական

ընդրակարգով ընդրությունների քվեաթերթիկում նշվում են կուսակցությունների (կուսակցությունների դաշինքի) անվանումները՝ այբբենական հերթականությամբ, ինչպես նաև ընդրական ցուցակի առաջին երեք թեկնածուների ազգանունները, անունները եւ հայրանունները (հոդվ. 114, մաս 2):

**7. Միջազգային պրակտիկայի վերլուծությունը վկայում է նաև, որ այնպիսի ընդրական համակարգերի պարագայում, ինչպիսին առկա է Հայաստանում, համամասնական ընդրակարգով մանդապն սրբազնուց հետո իրենց կուսակցությունները լքելու կամ կուսակցական պարկանելությունը փոխելու հանգամանքը պառամենդական կայունության եւ ընդրողների կարարած ընդրությանը հավաքարիմ մնալու գեսանկյունից դառնում է ժամանակակից ժողովրդավարությունների առջեւ ծառացած լուրջ հիմնախնդիր: Նման պրակտիկան հանգեցնում է նրան, որ ընդրողների կայացրած որոշումը հաճախ զանգվածաբար փոփոխության է ենթարկվում: Այդ խնդրի լուծման եղանակների ընդրությունը, բնականաբար, մեծապես պայմանավորված է ընդրական համակարգերի առանձնահավկություններով:**

Սահմանադրական դադարանն արձանագրում է, որ գարբեր երկրներ գարբեր միջոցներ են գորել դպրությալ հիմնախնդիրը լուծելու համար: Եթե Խապանիայում դա արվում է կուսակցությունների փոխհամաձայնությամբ սրբության դաշնագրի հիման վրա, ապա մի շարք այլ երկրներում փորձ է արվում հարցի լուծումը գդնել օրենսդրական կարգավորումների մակարդակով: ՀՀ սահմանադրական դադարանը գդնում է, որ այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք հանգամանքներ.

**նախ. պարշաճ գնահատել կուսակցությունների գեղն ու դերը երկրի քաղաքական համակարգում.**

մասնավորապես, ազգային խորհրդարաններում կուսակցությունների դերի կարեւորությունը հիմնականում հանգում է նրան, որ դրանք ապահովում են պետության եւ հասարակության փոխազդեցությունը եւ ընդրողների շահերը լիարժեքորեն արդահայտում են միայն այն դեպքում, երբ խորհրդարանում պարշաճ կերպով ներկայացված են հասարակության մեջ իրենց ունեցած ազդեցությանը համապատասխան:

Կուսակցությունների մասին ցանկացած դասական սահմանում ելնում է այն ակնհայր ճշմարգությունից, որ դպրության միավորման գործունեության նպագրակը հասարակության եւ պետության քաղաքական կյանքին մասնակցելն է, քաղաքական

իշխանության մաս կազմելը, քաղաքական պարասխանադրվություն սպանձնելն ու այն իրականացնելը: Անառարկելի է, որ չի կարող լինել ժողովրդավարական պետական համակարգ՝ առանց անհրաժեշտ քաղաքական կառուցակարգերի: Չի կարող լինել նաև հասարակական կայունություն՝ առանց **կարողունակ քաղաքական ուժերի կողմից** երկրի այսօրվա ու վաղվա համար ժողովրդավարական եղանակներով քաղաքական պարասխանադրվություն սպանձնելու: **Կուսակցությունն իր հանրային առաքելությունը կարող է իրականացնել միայն այն դեպքում, եթե ոչ միայն ծրագրային ցանկություն, այլև անհրաժեշտ ու բավարար կարողունակություն ունի քաղաքական պարասխանադրվություն սպանձնելու համար, եւ դա դեսանելի ու գնահավելի է ընդունողի կողմից:** Համամասնական ընդունությունը իրականացվող ընդունությունները կոչված են ոչ միայն ձեւավորելու կայուն ու գործունակ օրենսդիր իշխանություն, այլև վճռորոշ դեր ունենալու երկրի քաղաքական կառուցակարգի կայացման ու ամրապնդման գործում:

**Միջազգային պրակտիկան վկայում է, որ ընդունությամբ նախագրեաված, այսպես կոչված, «մաքուր» համամասնական ընդունությունը այնպիսին է, որ ընդունողը ձայնը փալիս է որեւէ քաղաքական ուժի՝ նրա քաղաքական կողմնությունների ու հանրությանը ներկայացրած ծրագրային մոդելումների հիման վրա:**

**Երկրորդ՝ հաջող առնել մեծամասնական եւ համամասնական ընդունությունները, այլև դրանց դերը քաղաքական իշխանության ձեւավորման եւ քաղաքական պարասխանադրվություն սպանձնելու եւ իրացնելու գործում.**

համամասնական ընդունությունը հիմնական առանձնահարկությունը կայանում է նրանում, որ այն ապահովում է քաղաքական շահերի եւ նախապարփակությունների առավել լիարժեք ներկայացուցություն՝ արդացողելով հասարակության քաղաքական կամքը, հանդիսանալով որպես հասարակության ժողովրդավարական կարեւորագույն ինսպիրուտիվներից մեկի՝ բազմակուսակցականության կայացման եւ գարգացման հզոր խթան:

**Միաժամանակ,** Հայաստանում արմադրավորված համամասնական ընդունությունների դեպքում ընդունողը ոչ թե մանդապը փալիս է կոնկրետ ներկայացուցիչն, այլ արդահայտում է իր քաղաքական նախապարփակությունը, ընդունում է այն քաղաքական ուժին, որին ինքը նախընդունում է: Ենթեւարար, ընդունություններում ընդունողի կամքի արդահայտության արդյունքը պեսք է հանդիսանա այն

քաղաքական ուժի առկայությունը խորհրդարանում, որին ընդունված է իր քաղաքական նախապատվությունը, եւ հետագայում այդ կամքի արդահայտման արդյունքը պահպանելու միջոց կարող է հանդիսանալ խմբակցությունից կամավոր դուրս գալու հիմքով մանդապը վայր դնելը (եթե կուսակցության ցուցակի ձեւավորման վրա ընդունված որեւէ ազդեցություն չունի կամ թեկնածուն ներկայացված չի եղել քվեաթերթիկում), քանզի նման գործընթացի լայնամասշբաք ծավալների դեպքում ընդունված կամքն այլևս արդահայտված չի լինի քաղաքական ուժերի խորհրդարանական հարաբերակցությունում, ավելին՝ փեղի կունենա ընդունված կամքի աղավաղում եւ խեղաթյուրում:

**Երրորդ՝ պետքության զարգացման քաղաքական ուղենիշները ճշգրիտելու եւ դրանց վերաբերյալ ընդուների դիրքորոշումը հսկակեցնելու հարցում կուսակցությունների եւ քաղաքական գործիչների ծրագրային մոփեցումների անհրաժեշտությունը եւ դերը պետքության զարգացման ծրագրային մոփեցումների մշակման եւ ապահովման գործում.**

Ժողովուրդը՝ ընդուների միջոցով որոշելով, թե խորհրդարանը քաղաքական ուժերի ինչպիսի հարաբերակցությամբ պետք է աշխատի, դրանով իսկ օրենսդիր մարմնին պարզվիրակում է իրականացնել օրենսդրական գործունեություն՝ իր իսկ նախընդունված քաղաքական կողմնորոշումներին համապարասխան: Որեւէ կոնկրետ կուսակցության օգին քվեարկելիս ժողովուրդն ակնկալում է որոշակի ուղղվածություն ունեցող քաղաքականության կյանքի կոչում: Իսկ ընդուների պարբերականությունը նպագակ է հետապնդում հնարավորություն փակ ժողովրդին որոշակի ժամանակահարված հետո գնահատել քաղաքական ուժերի գործունեությունը՝ եղածին հավանություն փալու կամ նախապարփությունը այլ քաղաքական ուժի փալու համար:

**Չորրորդ՝ ընդուների կողմից իրենց պետքահշխանական իրավունքի պարպիրակման ժամանակ այն սուբյեկտի ճիշդը ընդունված, որին պարպիրակվում է այդ իրավունքի իրացումը.**

այն, որ ինչպես մեծամասնական ընդուների, այնպես էլ համամասնական ընդուների դեպքում մանդապի աղբյուրը ժողովուրդն է, անվիճելի է: Սակայն հիմնախնդրի բուն էությունը եւ դրա իրավաչափությունը բացահայտելու համար հարկ է դրան մոփենալ ոչ միայն այն փեսանկյունից, թե ո՞րն է մանդապի աղբյուրը, այլ նաև՝ թե այդ աղբյուրը՝ ժողովուրդը, ո՞մ է

պարզիրակել պետքահշխանական իր իրավունքի իրացումը եւ ինչ նպարակով է պարզիրակել: Պարզամավորների լիազորությունների դադարեցման խնդրո առարկա հիմքի իրավաչափությունը կարող է գնահատվել միայն վերոնշյալ երեք հարցերի պարասիանների եռամիասնության շրջանակներում: Այդ հարցերի պարասիանների արդյունքում պարզ կդառնա, որ պարզամավորի մանդարի գործողության դադարեցման խնդրո առարկա հիմքը պարզամավորի՝ ոչ թե կուսակցությանը հաշվեպու լինելու, այլ հենց իր մանդարի աղբյուրին՝ ժողովրդին հաշվեպու լինելու դրսեւորում է: Նման միջոցով ապահովում է այն պարզամավորի քաղաքական պարասիանավությունը ժողովրդի առջև, ով շեղվել է այն քաղաքական ուղեգծից, որի իրացման համար ժողովուրդը պարզիրակել էր նրան պետքահշխանական իր իրավունքի իրացումը: Կուսակցության կողմից ծրագրային ուղեգծից շեղվելու հանգամանքի վերաբերյալ ժողովուրդն իր դիրքորոշումն արդահայփում է հերթական ընդունությունների ժամանակ: Այս առումով սկզբունքային նշանակություն ունի նաև ընդունությունների պարբերականության ժամկետային սահմանների ճիշդի որոշումը:

**Դինգերորդ՝ հարկապես անցումային երկրներում ժողովրդի քաղաքական կամքի ազար դրսեւորման արդյունքում ձեւավորված պատրամենքական քաղաքական հարաբերակցության վրա իշխանական ազդեցության հերթագա բացառումը եւ իշխանությանը հաճ արքարենքրական նոր հարաբերակցության կանխումը.**

“ Սահմանադրական դարպարանը ելնում է այն սկզբունքային դիրքորոշումից, որ ամեն դեպքում ընդունությունների կամքի արքահայփումը չպետք է խաթարվի: Սահմանադրական դարպարանը գիտում է, որ խորհրդարանական խմբակցությունը լրելն արգելող նորմերը միտքած են հենց նման հնարավորության կանխարգելմանը եւ ապահովում են այդ խնդրի լուծումը:

Անհրաժեշտ է համամասնական ընդունությունում պարզամավորների գործող թափուր մնալու ընթացակարգը եւ խմբակցությունը լրելուն վերաբերող նորմերը դիմումների համակարգային փոխկապակցվածության մեջ: Համամասնական ընդունությունում պարզամավորների գործող թափուր մնալու դեպքում այն լրացվում է նույն ցուցակի հաջորդ թեկնածուի կողմից: Ինչպես պարզամավորի թափուր գործող լրացնելու այս կարգը, այնպես էլ կուսակցական պարկանելությունը փոխելու հիմքով մանդարի գործողության դադարեցումն այն հիմնական իրավական միջոցներն են, որոնք ապահովում են մինչեւ հաջորդ խորհրդարանական ընդունությունները խորհրդարանում քաղաքական այն հարաբերակցության պահպանումը,

որն սկզբնապես ձեւավորվել է ընդունություններում ժողովրդի կամքի արդահայդման արդյունքում: Խորհրդարանում քաղաքական այն հարաբերակցությունը, որը սահմանվում է ըստ ժողովրդի կամագրահայդության, չի կարող փոփոխություն կրել փվյալ գումարման խորհրդարանի գործունեության ընթացքում: **Նեփեւաբար, պարգամավորի լիազորությունների դադարեցման խնդրո առարկա հիմքն իրավաչափ միջոց է այդ նպագրակն ապահովելու համար:** Այլապես նման հիմքի բացակայության պայմաններում կսրացվի, որ քաղաքական կուսակցությունների գոյությունը, որպես ժողովրդի քաղաքական կամքի ձեւավորման եւ արդահայդման միջոց, միանգամայն շինձու երեւույթ է, քանի որ հենց ընդունություններից հետո կարող են դեղի ունենալ պարգամավորական խմբերի ու խմբակցությունների այնպիսի վերադասավորումներ, որ ընդունությունների արդյունքում ձեւավորված օրենսդիր մարմինը չարդահայդի ժողովրդի կամքը: Այսինքն՝ ժողովրդի կամքի արդահայդությունը լինի որոշակի խորհրդարանական քաղաքական հարաբերակցություն, որը, սակայն, հակառակ ժողովրդի կամքի, վերածվի մեկ այլ հարաբերակցության, ինչի արդյունքում ձեւավորվի օրենսդիր մարմին, որը չի արդացոլի ընդունությունների իրական արդյունքները: Մինչդեռ ընդունությունների առաջնային գործունեություններից մեկն այն է, որ կարողանա ապահովել ընդունությունների հարաբերակցությունների համար հարաբերակցությունը՝ ընդունությունների իրական աջակցությանը համամասնորեն:

**Վեցերորդ՝ կուսակցական պարկանելությունը փոխելու հիմքով մանդապի գործողության դադարեցման ինսպիրությի էության եւ բովանդակության պարմական գարգացումը.**

Միջազգային պրակտիկան վկայում է, որ, այսպես կոչված, կուսակցությունների դասալքումը բավականին տարածված եւ խնդրահարույց պրոբլեմ է: Օրինակ, ըստ Եվրախորհրդի Վենեգիկի հանձնաժողովի փորձագետների վերլուծության, Իտալիայում 1996-2001թթ. պարգամավորների 10 գույքությունների վերլուծության, Խոհեմանի Պետրական դրույթում 1993-1995թթ. այդ թիվն հասել է 31 գույքությունների: Առաջնային պատճեններում 1992-1996թթ. այն կազմել է 40 գույքությունների: Հետևյալ պատճեններում 1967-73թթ. 2700 պարգամավոր է փոխել կուսակցությունը, որոնցից 212-ը նոր կուսակցությունների դարձել են նախարարներ: Ուկրաինայում 1998-2000թթ. պարգամավորների 60 գույքությունների վերաբերյալ անգամ փոխել է կուսակցությունը, իսկ առանձին պարգամավորներ փոխել են իրենց խմբակցությունը մինչեւ 10 անգամ:

**Նայասպանում մինչեւ 1997թ. մայիս ամիսը ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգը նախադատում էր նորմ, համաձայն որի պարզաբանվորը կարող էր դուրս գալ խմբակցությունից, եթե նա կամովին հրաժարվում է պարզաբանվորական լիազորություններից (հոդվ. 29): 1997թ. մայիսի 27-ի օրենսդրական փոփոխության արդյունքում այդ նորմը փոխարինվեց հետեւյալ դրույթով. «Պարզաբանվորը կարող է դուրս գալ խմբակցությունից՝ այդ մասին գրավոր գրեյյալ պահելով համապարասիան խմբակցությանը եւ Ազգային ժողովի նախագահին, որն այդ մասին հայդարարություն է անում Ազգային ժողովի առաջիկա նիստում»: Նման փոփոխությունն սկիզբ դրեց մամուլում լայն արձագանք սրացած, այսպես կոչված, «առնելիքավագրին»: 1997-2007թթ. ընթացքում Նայասպանի Ազգային ժողովի թվով 85 պարզաբանվոր փոխել է պարզաբանվորական խմբակցությունը:**

Նման երեսույթը, որպես հասարակական կայունությանն սպառնացող լուրջ վրանգ, միջազգային պրակտիկայում, ինչպես նշվեց, կանխման գործեր կառուցակարգային ծեսեր է գրել: Նարկ է նկատել, որ ծեսավորվելով բասնիններորդ դարում՝ այս ինսպիրուտիվն իր պարմական զարգացման ընթացքում փոխել է իր եռականը, բովանդակությունը եւ նպագակը: Եթե իր սկզբնական իմաստով այն գործում էր որպես խորհրդարանում կուսակցական կարգապահության խախտումների համար կուսակցության կողմից իր կուսակից պարզաբանվորի նկարմամբ կիրառվող պարասիստանարկության միջոց, ապա ներկայումս այն կիրառվում է հիմնականում որպես պարզաբանվորների դասալքությունը կանխելու միջոց: Օրինակ, Պորգուգալիայի Սահմանադրության 160 հոդվածի ց) կերպն առանց երկիմասպության սահմանում է, որ պարզամավորը կորցնում է իր մանդապը, եթք դառնում է այլ կուսակցության անդամ, որի կողմից նա չի առաջադրվել ընդունակությունների ժամանակ: Այդ ինդրին, ինչպես նշվեց, առավել մեղմ լուծում են փվել Խսպանիայում՝ կուսակցությունների կողմից դասալքության դեմ սրտորագրած դաշնագրի միջոցով: Ռուսասպանի Դաշնությունում «Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի անդամի եւ Պետքական դումայի պարզաբանվորի կարգավիճակի մասին» դաշնային օրենքում 2005թ. հուլիսին կարգարված փոփոխության համաձայն 4-րդ հոդվածի 3-րդ մասում դրույթ ավելացվեց, համաձայն որի՝ Պետքական դումայի պարզաբանվորը մանդապը կորցնում է նաև այն դեպքում, եթք իր դիմումի համաձայն դուրս է եկել այն խմբակցությունից, որի կուսակցական ցուցակներով նրան թույլագրվել է մասնակցել պարզաբանվորական մանդապների բաշխմանը:

Ուկրաինայում սահմանադրական մակարդակով (սահմանադրական փոփոխությունների արդյունքում) սահմանվեց (հոդվ. 81, մաս 6), որ եթե պարզաբանվորը չի միանում այն կուսակցության (կուսակցությունների դաշինքի) խորհրդարանական խմբակցությանը, որի նախընդրական ցուցակներով է ընդունվել, կամ դուրս է գալիս այդ խմբակցությունից, այդ դեպքում նրա լիազորությունների վաղաժամկետը դադարման մասին որոշում է ընդունում համապատասխան կուսակցության մշգական բարձրագույն մարմինը: Ուկրաինայի սահմանադրական դադարանը 2008թ. հունիսի 25-ի իր N12-pn/2008 որոշման մեջ հարուկ ընդգծեց օրենսդիր իշխանության կազմում խորհրդարանական խմբակցությունների կարեւոր դերը որպես խորհրդարանական քաղաքական մարմին, ինչպես նաև մեկնաբանելով Սահմանադրության 81 հոդվածի 6-րդ մասը՝ հակասահմանադրական ճանաչեց «Ուկրաինայի ժողովրդական պարզաբանավորի կարգավիճակի մասին» օրենքի 13 հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի այն դրույժները, որոնց համաձայն պարզաբանավորը կարող է ազար դուրս գալ պարզամավորական խմբակցությունից կամ չանդամագրվել այն կուսակցության պարզամավորական խմբակցությանը, որի ցուցակներով ընդունվել է պարզաբանավոր:

Նեփաբերքիր դրույթ է ամրագրված նաև Նորվեգիայի Սահմանադրության 63 հոդվածի d) կետում, համաձայն որի՝ յուրաքանչյուր ընդունելով պարզաբանավորի պարտականությունն է ընդունել ընդունելով կարող է բացառություն լինել նաև այն դեպքը, եթե նա հանդիսանում է մի քաղաքական կուսակցության անդամ, սակայն ընդունվել է մեկ այլ կուսակցության ընդունվելով:

Ակնհայտ է, որ ձեւավորված քաղաքական ու իրավական մշակույթը հաշվի առնելով՝ փարբեր երկրներ փորձում են ուղղակի կամ անուղղակի մեթոդներով կանխել խորհրդարանական կուսակցափոխության այդ ոչ ցանկալի երեւույթը: Այս հարցում ավելի առաջ են գնացել Հնդկաստանը, Հարավաֆրիկյան Հանրապետությունը և մի շարք այլ երկրներ, որպես կա նաև այն պրակտիկան, որ ոչ միայն մանդապից զրկվում է փվյալ կուսակցությունից դուրս եկող պարզաբանավորը, այլև նրանք, ովքեր քվեարկում են դեմ կամ ձեռնպահ են մնում քվեարկությունից՝ հակադրվելով իրենց կուսակցության դիրքորոշումներին: Դիմնավորումն այն է, որ թույլ չփրվի թուլացնել ընդունադիր կուսակցություններին (իշխանության լծակներով փոշիացնել դրանք, նպարակ ունենալով այդ ճանապարհով լրացուցիչ ամրապնդել իշխող կուսակցության դիրքերը), փոխել ընդուների իրական կամարդահայրման պարկերը: Սակայն ներկուսակցական հարաբերություններին վերաբերող նշված

մոփեցումը չի ընդունվում Եվրոպական իրավական համակարգում՝ կուսակցական կարգապահական խնդիրը փարանջափելով ժողովրդի քաղաքական կամքի արդահայրման ու դրան հավագրաիմ մնալու հիմնահարցից: **ՀՀ սահմանադրական դափարանն իրավաչափի է համարում այս մոփեցումը:** Կուսակցական կարգապահական խնդիրները պետք է լուծվեն ներկուսակցական ժողովրդավարության ամրապնդման շրջանակներում:

**8.** Տարբեր երկրների պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ բոլոր դեպքերում խորհրդարանական խմբակցությունները լքելու փորձերը զիսավորապես հրահրվում են ընթացիկ քաղաքական նպատակներ հետապնդելով՝ փոխելով ընդուների իրական կամաարդահայրման պարկերը: **ՀՀ սահմանադրական դափարանը գիտում է, որ երկրի քաղաքական կառուցակարգերի ամրապնդման, քաղաքական կուսակցությունների կայացման, քաղաքական հանդուրժողականության մթնոլորդի ապահովման, քաղաքական պարասիստանարկության երաշխավորման համար առանձնապես համակարգային վերափոխումների փուլում անհրաժեշտ է «հակադասալքային» դրույթների ամրագրումն օրենսդրության մեջ: **Դա հավկապես վերաբերում է այն երկրներին, որտեղ համամասնական ընդրակարգով ընդրություններում ընդրողներին չի ներկայացվում կուսակցության կողմից առաջարկող թեկնածուների ցուցակը, որպեսզի ընդրողները դիրքորոշում արդարադատության ցուցակում ընդգրկված անձանց վերաբերյալ:** Ընդ որում, միայն այն ընդրական համակարգի դեպքում կարող է կիրառվել «դասալքության» կանխման իրավական կարգավորումը, եթե պարզաբանավորն ընդրուել է ոչ թե նրա վերաբերյալ ընդրողի կարծիքը հաշվի առնելու հիման վրա, այլ գույք կուսակցության ծրագրին հավանություն փալու արդյունքում, այսինքն՝ եթե շեշտադրումը կապարվում է քաղաքական պարասիստանարկության եւ դրա ապահովման կառուցակարգերի վրա:**

**ՀՀ սահմանադրական դափարանը գիտում է, որ խորհրդարանում քաղաքական ուժերի հարաբերակցության ցանկացած փոփոխություն, որն ընթացիկ շահեր է հետապնդում եւ փոխում է ժողովրդի ազատ կամաարդահայրմանը ձեւավորված քաղաքական հավասարակշռությունն օրենսդիր մարմնում, անհամագեղեցիկ է ժողովրդափախանության հիմնարար սկզբունքների հետ եւ իրավաչափի համարվել չի կարող:**

**9.** **ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է մի շարք սկզբունքներ, որոնք Նայափանի Նանրապետությանը հաղորդում են ժողովրդավարական պետության որակներ:**

Դրանք ընդրակարգի հիմնարար սկզբունքներն են, մասնավորապես, ընդրությունների **պարստադրականության եւ պարբերականության** սկզբունքները (Սահմանադրության 2 հոդված՝ փոխկապակցված 1-ին հոդվածի՝ «Ժողովրդավարական» սահմանադրախրավական բնութագրիչի հետ, ինչպես նաև 4, 30 հոդվածների հետ), **բազմակարծության ու բազմակուսակցության** սկզբունքները (Սահմ. 7 հոդված), **խոսքի, միավորումների եւ ժողովների ազատությունը** (Սահմ. 27, 28 եւ 29 հոդվածներ), **հանրագրեր ներկայացնելու եւ պարշաճ պարասիան սրանալու իրավունքը** (Սահմ. 27.1. հոդված) եւ այլն:

Այս ընդհանուր սկզբունքներից բացի, հարկ է առանձնացնել նաև երկու **կառուցվածքային** սկզբունքներ, որոնք պայմանավորում են Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարական հաստատությունների բուն էությունը.

**նախ՝ ազատ մանդապի սկզբունքը՝ Ազգային ժողովի պարզամավորի անկախությունը** որեւէ ցուցումից, պարվիրանից եւ նրա ենթարկվելը բացառապես իր խղճին եւ համոզմունքներին (Սահմ. 66 հոդվածի 1-ին մաս): Ազատ մանդապի ուժով պարզամավորը կաշկանդված չէ անգամ ընդրողների կամքով, նա ազատ է իր պարզամավորական գործունեության մեջ, ներառյալ քվեարկությունը խորհրդարանում: Ազատ մանդապի սկզբունքը պարզամավորի սահմանադրական կարգավիճակը պայմանավորող այլ առանցքային երաշխիքների հետ մեկտեղ (*ինդեռնիցելու*՝ Սահմ. 66 հոդվածի 2-րդ մաս, *անձեռնմխելիություն*՝ Սահմ. 66 հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասեր) հնարավորություն է փալիս ձեւավորելու այլ իշխանության ճյուղերից **անկախ օրենսդիր իշխանություն՝ Ազգային ժողով**, եւ պարզամավորներին դիմարկել որպես **ամբողջ ժողովրդի**, այլ ոչ թե իրենց ընդրողների կամ թեկուզեւ ամբողջ ընդրազանգվածի ներկայացուցիչներ, ապահովելով խորհրդարանի համախմբող գործառույթը:

Ազատ մանդապի սկզբունքը՝ որպես **ներկայացուցչական ժողովրդավարության** հիմքերից մեկը, հնարավոր է դարձնում կարծիքների բախումը խորհրդարանում եւ ապահովում Ազգային ժողովի՝ փոխհամաձայնության հանգելու ունակությունը: Ներկայապես, ազատ մանդապի շնորհիվ է խորհրդարանում ապահովում հավասարակշռությունը դարբեր մասնակի (քաղաքական) շահերի միջև, որով պայմանավորված է բարձրագույն սահմանադրական մարմիններից մեկի գործունակությունը՝ ընդունելու օրենքներ, կայացնելու որոշումներ եւ իրականացնելու իր այլ լիազորությունները:

Երկրորդ՝ ՀՀ Սահմանադրության մակարդակով ամրագրվում է կուսակցությունների սահմանադրական գործառույթը, այն է՝ **Ժողովրդի քաղաքական կամքի ձեւավորմանն ու արդահայփմանը նպաստելը** (Սահմ. 7 հոդվածի 2-րդ մաս): Այլ կերպ, Սահմանադրությունն ամրագրում է Հայաստանի Հանրապետությանը՝ որպես ժողովրդավարական պետության, բնորոշ եւս մեկ սկզբունք, այն է՝ **Կուսակցական ժողովրդավարության սկզբունքը**:

Այս սկզբունքը պայմանավորում է կուսակցությունների էական դերակարարությունը ժողովրդի քաղաքական կամքի ձեւավորման եւ արդահայփման հարցում, այդ թվում՝ նաեւ ընդունակության համակարգին առավել ներկայացուցչականություն հաղորդելու համար կուսակցական ցուցակներով (համամասնական ընդունակարգով) ընդունակությունների հնարավորությունը, չբացառելով, սակայն, մեծամասնական ընդունակարգի կիրառումը, իսկ այդ երկու եղանակների միջև համամասնությունների որոշումը վերապահելով օրենսդրի հայեցողությանը:

Դրա արդյունքում որեւէ կուսակցության ընդունակությունը պատգամավորը որոշակիորեն կաշկանդված է լինում իր կուսակցական պարկանելությամբ այն առումով, որ այդ կուսակցության խմբակցությունից նրա կամովի դուրս գալը կամ այդ կուսակցությունում նրա անդամության դադարեցումը առաջացնում են բախում կուսակցական պարկանելության եւ միայն իր խղճով եւ համոզմունքներով առաջնորդվելու նրա ազագության միջև, այլ խոսքերով, ազագ մանդարի սկզբունքի եւ կուսակցական ժողովրդավարության սկզբունքի միջև:

Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության 67 հոդվածը սահմանել է պարզաբանվորի լիազորությունների դադարման սպառիչ ցանկ եւ օրենքին չի պարվիրակել դրա լրացման հնարավորություն: Համաձայն այդ հոդվածի՝ «Պարզաբանվորի լիազորությունները դադարում են Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն ավարտվելու, Ազգային ժողովն արձակվելու, Սահմանադրության 65-րդ հոդվածի առաջին մասի պայմանները խախտելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելու, մեկ հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների ավելի քան կեսից անհարգելի բացակայելու, ազագագրկման դարպագարփելու, անգործունակ ճանաչվելու եւ իրաժարականի դեպքերում»: Ընդ որում, 65 հոդվածի պայմանները վերաբերում են նրան, որ պարզաբանվորը չի կարող գրադվել ձեռնարկագիրական գործունեությամբ, զբաղեցնել պաշտոն պետական կամ գեղական ինքնակառավարման մարմիններում կամ առեւտրային կազմակերպություն-

ներում, կարարել այլ վճարովի աշխարանք, բացի գիրական, մանկավարժական եւ սպեղծագործական աշխարանքից: Բացի դրանից, պարզամավորն իր լիազորությունները կարարում է մշտական հիմունքներով: Ավելայի է, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 12 հոդվածի դրույթները ՀՀ Սահմանադրության 67 հոդվածով նախարեսված հիմքերի թվարկումն են եւ այս առումով սահմանադրականության որեւէ խնդիր չեն առաջացնում:

ՀՀ Սահմանադրությունը ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ օրենքին վերապահել է քննության առարկա հարցի շրջանակներում միայն պարզամավորի լիազորությունների դադարման կարգի սահմանումը: Ենթեւարար, ոչ թե պետք է օրենքով պարզամավորի լիազորությունների դադարեցման նոր հիմք սահմանվի, այլ վերականգնվի նախկինում եղած դրույթը՝ կապված պարզամավորական խմբակցությունից պարզամավորի կամովին դուրս գալու հարցի օրենսդրական կարգավորման հետ: Ինչպես նշվեց, մինչեւ 1997թ. մայիս ամիսը ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգը նախարեսում էր, որ պարզամավորը կարող է դուրս գալ խմբակցությունից, եթե նա կամովին հրաժարվում է պարզամավորական լիազորություններից (հոդվ. 29): Նման իրավակարգավորումն առկա էր պարզամավորի լիազորությունների դադարեցման սահմանադրական նույն հիմքերի առկայության պայմաններում, ինչն առկա է նաև այսօր: Վյսինքն՝ պարզամավորի լիազորությունների դադարման հիմք էր հանդիսանում Սահմանադրության 67 հոդվածով նախարեսված հրաժարականը, իսկ նման քայլի իրավունքը պարզամավորինն է:

Վերոշարադրյալից եկնելով՝ ՀՀ սահմանադրական դարարանը գրնում է, որ Հայաստանի Հանրապետությունում առկա ընդունակությունը պարզապես մանդապն սպանում է կուսակցությանը դպրոց ձայնների շնորհիվ, նշված չի եղել քվեաթերթիկում եւ նրա վերաբերյալ ընդունակությունը որեւէ կամարդահայպություն չի դրսեւորել, սակայն ցանկանում է դուրս գալ խորհրդարանական խմբակցությունից, ապա դա կարող է անել մանդապը կամավոր վայր դնելուց հետո միայն, քանի որ հակառակ դեպքում կնպաստի խորհրդարանում քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությանը, որը փոխում է ժողովրդի ազատ կամարդահայպմամբ ձեւավորված քաղաքական հավասարակշռությունն օրենսդիր մարմնում եւ չի բխում իրավական պետության եւ ժողովրդաիշխանության սահմանադրական հիմնարար սկզբունքներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կեդով, 102 հոդվածով, «Սահմանադրական դադարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 68 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դադարանը

**Ո Ր Ո Շ Ե Յ.**

**1.** «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

**2.** «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Պարզամավորը կարող է դուրս գալ խմբակցությունից՝ այդ մասին գրավոր փեղյակ պահելով համապատասխան խմբակցության ղեկավարին» դրույթը՝ քվեաթերթիկներում որպես ընդունակ ցուցակի թեկնածուներ չնշված պարզամավորների առնչությամբ այնքանով, որքանով նպաստում է Ազգային ժողովում ժողովրդի ազար կամարդահայրմամբ ձեւավորված քաղաքական հավասարակշռության փոփոխությանը, ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 2-րդ եւ 7-րդ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

**3.** Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՌՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**